ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԵԿԱՆ ՆԻՍՏԱՇՐՋԱՆԸ

Սույն թվականի սեպտեմբերի 14--22-ը Ցվեյցարիայի Ժնև քաղաքում, Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնում, տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական Կոմիտեի տարեկան հերթական նստաշրջանը:

Նստաշրջանին մասնակցում էին, բացի Կենտրոնական Կոմիտեի անդամներից և ԵՀԽ-ի պաշտոնեությունից, բազմաթիվ դիտորդներ, խորհրդատուներ և երիտասարդության ներկայացուցիչներ՝ շուրջ 320 հոգի:

Նստաշրջանում լսվեց ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դր. Կոնրադ Ռայզերի և Կենտրոնական Կոմիտեի ատենապետ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի հաշվետու զեկուցումները՝ նախորդ ժողովից մինչև ներկա նստաշրջանն ընկած ժամանակաշրջանում ԵՀԽ-ի և նրա առանձին բաժանմունքների գործունեության, ինչպես նաև 1998 թվականի ամռանը տեղի ունենալիք համագումարի ծրագրման մանրամասների մասին:

Նստաշրջանում առանձին զեկուցումներ լսվեցին ցեղային խտրականության նոր երևույթների՝ ի մասնավորի ԱՄՆ-ի սևամորթների նկատմամբ, վերջերս Պեկինում տեղի ունեցած կանանց միջազգային համագումարի, Միացյալ Ազգերի Կազմակերպության հիմնադրման 50-ամյակի, Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու և ԵՀԽ-ի միջև զարգացող հարաբերությունների, կանանց իրավունքների պաշտպանությանը նվիրված տասնամյակի ներկա փուլում կատարված աշխատանքների, միջուկային նոր փորձարկումների կանխարգելման և ԵՀԽ-ի անդամ Եկեղեցիներին մտահոգող այլ բազմապիսի քաղաքական, ընկերային, ցեղային և տնտեսական հարցերի մասին:

Նստաշրջանի մասնակիցները հետագա օրերին հինգ խմբերի բաժանվելով՝ քննարկեցին իրենց բաժանմունքներին վերաբերվող հարցեր, ինչպիսիք են՝ Ս. հաղորդության, եկեղեցական միության, աստվածաբանական կրթության, կանանց և երիտասարդների դաստիարակության, առաքելու-

թյան և ավետարանչության, հասարակության և արդարության, ցեղային խորականության և աշխարհի մարդկության առողջապահության հետ առնչվող, տեղահանված ժողովուրդների, ԵՀԽ-ի տնտեսական վիճակի և բռնությունների դեմ պայքարի հարցերը:

Նստաշրջանի օրերին տեղի ունեցան հատուկ հանդիպումներ Կենտրոնական Կոմիտեի անդամ Օրթոդոքս Եկեղեցիների ներկայացուցիչների միջև, որոնց ընթացքում շեշտվեց Օրթոդոքսների ԵՀԽ-ի կյանքում գործուն մասնակցության անհրաժեշտությունը: Հանդիպումներ ունեցան նաև Եվրոպայի և այլ աշխարհամասերի Եկեղեցիների ներկայացուցիչները, որոնք իրենց երկրներում կրոնական, քաղաքական, տնտեսական, ընկերային կյանքի վիճակի մասին տեղեկություններ հաղորդեցին:

Նստաշրջանի վերջընթեր օրը, կեսօրին, հատուկ քայլերթ տեղի ունեցավ դեպի Միացյալ Ազգերի Կազմակերպության ժնևյան կենտրոն, ուր Ֆրանսիայի իշխանության կողմից գործադրվող միջուկային փորձարկումների դեմ բողոքի ցույց կատարվեց Կենտրոնական Կոմիտեի անդամների և նստաշրջանի բոլոր մասնակիցների կողմից:

Սեպտեմբերի 22-ի երեկոյան, նստաշրջանի ավարտին, ԵՀԽ-ի կենտրոնում գտնվող մատրան մեջ տեղի ունեցավ նստաշրջանի փակման արարողությունը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կողմից սույն ժողովի նստաշրջաններին մասնակցում էին երկու պատգամավորներ՝ Ներսես արքեպիսկոպոսը և օր. Սիլվա Ղազելյանը:

Նստաշրջանի ընթացքում, առավոտյան արարողությունների ժամանակ, այլ հոգևոր երգերի շարքում երգվեցին նաև Հայ Եկեղեցու հոգևոր շարականներ:

Կենտրոնական Կոմիտեի սույն նստաշրջանում ԵՀԽ-ի իրրև նոր անդամներ ընդունվեցին հինգ Աֆրիկյան Եկեղեցիներ:

Նստաշրջանի ավարտին Կենտրոնական Կոմիտեի անդամները որոշեցին, որ հաջորդ տարի նստաշրջանը վերատին տեղի ունենա Ժնևի կենտրոնատեղում՝ սեպտեմբերի 12—20-ը:

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՊԱՆՅԱՆ
ԱՆԴԱՄ ԵՀԽ-Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ